

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ՀՀ կառավարության 2011թ-ի հունիսի 10-ի N22 արձանագրային որոշման պահանջների համաձայն հայտարարում է բաց մրցույթ հետևյալ թափուր պաշտոնները համալրելու համար.

1. Ուռուցքաբան-1.0 դրույք
2. Նեոնատոլոգ-3.0 դրույք
3. Ֆտիզիատր-1.0 դրույք
4. Նյարդաբան-1.0 դրույք
5. Մանկական նյարդաբան-1.0 դրույք
6. Ընտանեկան բժիշկ-4.0 դրույք
7. Քիթ կոկորդ ականջաբան (մանկական)-1.0 դրույք
8. Հոգեբույժ-թմրաբան-1.0 դրույք
9. Սրտաբան-1.0 դրույք
10. Սրտաբան (մանկական) -1.0 դրույք
11. ԷՍԳ բժիշկ-1.0 դրույք
12. Սոնոգրաֆիստ-1.0 դրույք
13. Բժիշկ-լաբորանտ-1.0 դրույք
14. Շտապ օգնության բժիշկ-3.0 դրույք
15. Թերապևտ (ստացիոնար)-1.0 դրույք
16. Մանկաբույժ (ստացիոնար)-1.0 դրույք
17. Վարակաբան-1.0 դրույք
18. Իմունոլոգ-1.0 դրույք
19. Ֆիզիոթերապևտ-1.0 դրույք

ՀՀ կառավարության 2011թ-ի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, որը կբավարարի ստորև նշված պահանջներին՝

1. Բարձրագույն և հետբուհական կրթության առկայություն՝ համապատասխան մասնագիտությամբ,
2. հինգ տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն,
3. բժշկական էթիկայի կանոնների իմացություն,

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Թափուր տեղի հավակնորդների կողմից ներկայացվում է՝

- 1) դիմում/լրացվում է տեղում/
- 2) մեկ լուսանկար 3x4 չափի,
- 3) քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում),
- 4) ինքնակենսագրություն,
- 5) անձնագրի, բարձրագույն և հետբուհական (ում բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու ժամանակահատվածում օրենսդրությամբ սահմանվել է հետբուհական կրթության պահանջ (ինտերնատուրա, կլինիկական օրդինատուրա)) մասնագիտական կրթության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի (դրա առկայության դեպքում) պատճենները և բնօրինակները,
- 6) արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը,
- 7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դիմումատուի ցանկությամբ,
- 8) օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կծանոթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի աշխատանքային խմբի կողմից /Կոտայքի մարզ ք.Հրազդան Մ.Բաղրամյան թաղամաս, Պուրակային 32 հասցե /, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10.00-15.00-ը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2019թվականի փետրվարի 18-ը:

Մրցույթը տեղի կունենա 2019թ. փետրվարի 22-ին «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ- ում, ժամը 12:00-ին:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի աշխատանքային խմբին հեռ.՝ 0223 2 34 64, 0223 6 15 00:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացված փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: